ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 հուլիսի 2021 թվականի N 254-Ա

Տ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 163-րդ հոդվածի, 164-րդ հոդվածի 1-ին մասի և հիմք ընդունելով *Տ. Միքայելյանի* անձնական դիմումը՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Զառի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար ***Տաթևիկ Միքայելյանին*** տրամադրել 2021 թվականի աշխատանքային տարվա իր ամենամյա նվազագույն արձակուրդից՝ 15 աշխատանքային օր, 2021 թվականի հուլիսի 26-ից մինչև օգոստոսի 13-ը ներառյալ:

2. ***Տաթևիկ Միքայելյանի*** արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Զառի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի լիազորությունների իրականացումը ժամանակավորապես դնել կազմակերպության ընտանեկան բուժքույր ***Միլվարդ Հարությունյանի*** վրա:

3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Զառի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության ընտանեկան բուժքույր ***Միլվարդ Հարությունյանին*** և «Ռուբիկ Հարությունյանի անվան Աբովյանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն ***Վարդան Մանուկյանին*** ապահովել «Զառի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության սպասարկման տարածքի բնակչության առաջնային բժշկական օգնության և սպասարկման իրականացումը՝ «Ռուբիկ Հարությունյանի անվան Աբովյանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության համապատասխան մասնագետի *(ընտանեկան բժիշկ՝ Թերեզա Շիրինյան)* կողմից:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

2021 թվականի հուլիսի 21
ք. Հրազդան